ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
05.12.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-23/10-1 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<05>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ), մի կողմից, և <<Բևեռային ուղի>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ղ. Բարիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ ԿԱՏԱՐՈՂ), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.12.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-23/10-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 05.12.2022թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Բևեռային ուղի>> ՍՊԸ
ք. Երևան, Բագրատունյաց 27/1$_2$
ՀՎՀՀ 02228306
h/h 1510032345990100
<<Արարատբանկ>> ԲԲԸ
beverayin.ughi@yahoo.com
010-46-75-58
Ղ. Բարիկյան

(ստորագրություն)
Կ.Տ.